ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 89 – Ա **17 ապրիլի 2015 թ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1,6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 346-Ն և 2015 թվականի փետրվարի 26-ի N 300-Ն որոշումները

կարգադրում եմ՝

1.Մարզի <<Գավառի Ա.Իսահակյանի անվան N 4 հիմնական դպրոց>>, <<Վերին Գետաշենի N 2 միջնակարգ դպրոց>>,<<Ծափաթաղ գյուղի Հենրիկ Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Խաչաղբյուր գյուղի Կ. Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց>>,<<Ազատ գյուղի հիմնական դպրոց>>,<<Ծովինարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններին հատկացված շենքերն ու շինությունները ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը հանձնելու աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Դերենիկ Հովհաննիսյան – մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ, հանձնաժողովի նախագահ

Բիձյան Հակոբջան – մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի վարիչ

Սաֆարյան Համբարձում – մարզպետարանի աշխատակազմի ԿՄՍ վարչության կրթության բաժնի վարիչ

Զոհրաբյան Արմեն – մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարության բաժնի վարիչ

Շառոյան Վարազդատ – մարզպետարանի աշխատակազմի ԿՄՍ վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

Օհանյան Տիգրան – մարզպետարանի աշխատակազմի ԿՄՍ վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

Մանուկյան Խաչիկ – մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի գլխավոր մասնագետ

2. Հանձնաժողովին՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն ներկայացնել տեղեկատվություն վերը նշված պետական ոչ առևտրային կազմակերպությունների հանձնվող անշարժ գույքի վերաբերյալ.
2) աջակցել մարզի վերը նշված պետական ոչ առևտրային կազմակերպություններին՝ սեփականության իրավունքի (նոր նմուշի) գրանցման վկայականների ձեռք բերման աշխատանքներում.
3) կատարել վերը նշված պետական ոչ առևտրային կազմակերպություններին հատկացված պետական սեփականություն հանդիսացող հողային տարածքում առկա շենք-շինությունների փաստացի վիճակի համապատասխանության ուսումնասիրություն.
4) կատարված աշխատանքների մասին սահմանված ժամկետներում ներկայացնել տեղեկատվություն ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությանը և մարզպետին:
3.Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:
4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ